

ՄԱՅԻՆ

ՀԱՐԱՐԱԹՅՈՒՆԻ ԳԻՆԸ.

Ցարեկան զինն է 5 ուրբի (փոստի ծախսով) և օտարաբազա-
լացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցեով. В. Тафлисов.
В. Редакційно Армянской Газеты „Արմենի“.
Փոփոխում կարելի է ստորագրել խմբագրատան մէջ (ընթեր-
նու առան) և պ. Ծատուրեանցի խանութում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ.

Մասնաւոր յայտարարութիւն տակ տեսողը պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կողմի արծաթ: Յայտարարութիւններ
տպւում են չայրէն, փոստէն, վրացերէն, ֆրանսիացերէն, գերմա-
ներէն և թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱՐԱԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջ և աջ ժամ:—Ներքին տեսութիւն: Մեր պատասխանը „KABKAT“ լրագրին: Սր. Գա-
րանեան ուսումնարան: Նամակ Գանձակից: Նա-
մակ Բազումից: Նամակ Եւստից: Ներքին լու-
րեր:—Արտաքին տեսութիւն: Կ. Պոլսի
Սր. Պատրիարքի հրաժարում: Արտաքին լուրեր:—
Խառն լուրեր:—Փոխադրութեան տոմարներ:
Առևտրական:—Յայտարարութիւններ:—Բանա-
սիրական:

ԱՌԱՋ ԵՒ ԱՅԺՄ

Հին արեւելեան պետութիւնների վրա խո-
սելու ժամանակ օրինակ Նոբելի, Ասիական,
Բաբելոնեան պետութեան, Հին Պարսկաստանի,
Հայաստանի վրա՝ շատերը կրկնում են թէ
նրանք բնական, որովհետեւ մի անգամ պէտք է
ընկնէին, ինչպէս որ ամեն պետութիւնը պիտի
մի անգամ ընկնի....

Այդ տեսակ դատողութիւնը հիմնուած է
այն տեսութեան վրա, թէ վիճակը կամ
նախախտութիւնը այդպէս են կարգա-
դրել և միշտ այդպէս են կարգա-
դրուած...մինքն ընկնում է, միւսը բարձրա-
նում է....

Մենք պատուում ենք ամեն տեսակ դատո-
ղութիւնները, բայց ինքներս մեզ պարտաւո-
րութիւն ենք համարում աւելի խոր հայեացք
զգնել պատմական երեւոյթների բուն պատճառ-
ները վրա....

Մենք սովոր ենք ամեն մի պատմական,
հասարակական երեւոյթը՝ անտեսական կէտից
ընկել:

Այդպէս բացի վիճակից, և նախախ-
նամութեանից չը կրկնեն և տնտեսական
և քաղաքական պատճառները որք հասցրին
Հին պետութիւնները դէպք անկում:

Այդպէս մարդը նայում էր բնութեան վրա,
որպէս անյաղթելի ոյժի վրա, յետոյ որպէս
հզօր թշնամու վրա, որի դէմ պէտք է պա-
տերազմել: Նորորդ աստիճան դէպք կրթու-
թիւնը այն էր, երբ մարդս փոքր առ փոքր
տիրապետելով բնութիւնը, սկսեց նրան իր
սեփականութիւն համարել: Բայց այս
դեռ ևս կրթութեան ամենաբարձր աստիճան
չէր: Հին աշխարհը (մասնաւոր արեւելքը)
վարում էր սեփականութիւն անասան իրա-
ւունքով, սեփականութիւն ունեցող իրաւունք

ունէր զորք զին իր սեփականութիւնը ինչպէս
որ ինքն է կամենում, սեփականութիւնը բո-
լորովին անձնական էր: Սեփականութիւն
ունեցողը կարող էր մինչև անգամ ի չար
զորք ածել իր իրաւունքը, թէև իրաւունքի
այդ տեսակ զործարարութիւնը ֆիստէր հա-
սարականութեան էր:

Հին աշխարհի հասարակութիւնը նայում էր
բոլոր բնական ոյժերի վրա որպէս իր սիրունդի
սեփականութեան վրա: Բոլոր ինչ որ կար,
նրան էր պատկանում անասան իրաւուն-
քով՝ սկսած օրինակ անտառներից, մինչև ստո-
րին դասի անձնական աշխատանքը: Նա իրան
անասան իրաւունք էր համարում ոչ թէ
միայն զորք զին բոլոր զօրութիւնը, բայց և
բոլորովին սպառնալի ձեռքի տակ եղած բոլոր
ոյժերը, առանց պարտաւորութեան ընկնելու հա-
շիւ տալ և պաշտպան իր նրանց զործադ-
րութեան մասին.... Այս էր պատճառ որ,
անխնայ սպառնելով երկրի բնական հարստու-
թիւնները և այնքան հմուտութիւն չունենալով
նրանց տեղը ուրիշ գիւտեր անելու, անխնայ
կտրելով անտառները և չը հողալով նորերը
սնկելու, շքեղ և հիւսնայի բայց անպատաս-
կանութիւններ և արձաններ կանգնեցնելով և
նրանց անգործագրելի թողնելով, մեծ նոյն ժա-
մանակ աղտոյրիւն ծախսելով, հարստահարելով
ամբոյնի ոյժերը,—Հին աշխարհի հասարակու-
թիւնը վերջը հասնում էր այն դրութեան,
որ իր բոլոր ունեցած և իր մէջ բոլոր եղած
կենսքը սպառնելով, հասնում էր պղծաւո-
րութեան և ուրեմն քաղաքական անկման: Ապա-
ռելով, անխնայ ծախսելով իր բոլոր ոյժը,
ինքն հասարակութիւնը ստիպւած էր թողնել
իր բնակեցած երկիրը և խմբովին գաղթել
ուրիշ տեղեր....

Այս էր պատճառ, մեր կարծիքով, որ Հին
պետութիւնները ընկնում էին ու Հին աղբիւր
իրանց հայրենիքից գաղթում.... որովհետեւ
նրանք ապրում էին ներկայի համար,
առանց հոգալու ապագայի մասին....

Այսպէս էր առաջ,—իսկ այժմ....
Այժմեան հասարակութեան դրոշակը այս է՝
ապրել ոչ թէ միայն ներկայի համար, բայց
և ապագայ սերունդների համար: Իսկ այդ
սկզբունքի զործարարութիւնը կատարվում է

մի միջոցով, որ անյայտ էր Հին աշխարհին՝
մահաւոր և նիւթական աշխատան-
քի օգնութեամբ:

Մինչև որ վառում են փայտով,—ուրիշ
վառելիք են գտնում՝ քարածուխ:

Մինչև որ փայտը կտրում են,—նոր ան-
տառներ են տնկում:

Մինչև որ շօղմեքենան մտնելում է գոր-
ծադրութեան մէջ,—հազար գիտնականներ աշ-
խատում են միջոց գտնել օգուտ չարժեք մե-
քենաները:

Մինչև որ մի հասարակական հիմնարկու-
թիւն իրագործվում է,—բազմաթիւ քաղա-
քագէտներ առաջարկվում են նոր, կատարեա-
գործված հիմնարկութեան ձևերը.... և այն
և այլն:

Ճշմարիտ է աշխատող, մշակ ժողովրդի
դրութիւնը այժմ էլ ծանր է,—բայց նրան
չեն զորք դնում պէր ամբողջ ընկնելու,
յիմար փառքի համար աննպատակ արձաններ
կանգնեցնելու.... Մի և նոյն ժամանակ նրան
տալիս են այնքան կրթութիւն և խօսքի ազա-
տութիւն, որ նա ինքն կարողանար ցոյց տալ
իր կարիքը, հասարակութեան մէջ թող տուած
միջոցներով բողոքել անիրաւութեան դէմ, և
պահանջել դարման իր ցաւերին....

Հին աշխարհը ապրում էր ներկայի
համար, առանց մտածելու ապագայի վրա,
սպառնալիք բոլոր ձեռքի տակ եղած ոյժերը,
վերջը աղքատացնում էր երկիրը և բնութիւնը,
հետեւապէս ինքն էլ աղքատանում, և ընկ-
նում, իսկ ժողովրդը յուսահատված և բը-
թամտացրած գաղթում էր,—ժամանակա-
կից հասարակութիւնը ապրելով ոչ թէ միայն
ներկայի համար, աշխատում է յանձնել ա-
պագային թէ բնութիւնը, թէ հասարակու-
թիւնը այն դրութեան մէջ, որ ապագան չա-
նիծէ ներկային, աշխատում է անդադար վե-
րական գն և յեղ և ապագայ ոյժերը, հաս-
կանալով բնական, օրգանական օրէնքը, որ չը
կայ կենսք առանց նիւթի անդադար փոխա-
նականութեան:

Հին աշխարհը նման էր այն մարդուն, որ
կանգնեցնում է մի հոյակապ շինվածք, բայց
հարկաւոր չէ համարում նրան նորոգելու,

այնպէս որ տունը ընկնում է վերջապէս և
աւերակ է դառնում:

Նոր հասարակութիւնը շինում է ոչ այն-
քան շքեղ շինվածք, բայց չէ բաւականանում
միայն շինելով, այլ և պարտաւորութիւն է
համարում իր շինածը անդադար նորոգելու:

Հին աշխարհը բաւականանում էր սպա-
ռնելով,—նոր հասարակութիւնը անդադար
պահպանում է ինչ որ ստեղծել է....

Հին աշխարհը հիմնվում էր սահման
սկզբի վրա,—նորը հասարակական սկզբի
վրա:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ „KABKAT“ ԼՐԱԳԻՒՆ

Մենք գիտենք, որ „KABKAT“ լրագիրը չը
գիտէ հայերէն, չէ հետեւում հայոց դրակա-
նութեանը, չէ կարող հետազօտել հայոց կենսքը,
որովհետեւ թէ ինքն խմբագրութիւնը, թէ
աշխատակիցները հմուտ չեն մեր լեզվին,—և
այդ պատճառով խորհուրդ էինք տալիս նրան
նախ ծարել աշխատակիցներ, որք կարողանային
ձիշդ տեղեկութիւններ հարուցել—և թէ ոչ
լրագիրը երբեք չէ կարող դատել այն ինտելի-
ների վրա, որոց նիւթը, լեզվին անտեղեակ
ընկնու պատճառով անմատչելի է նրան....

Բայց որքան զարմացանք մենք, երբ 103-որդ
համարը կարդալով, տեսանք որ պատուելի
լրագիրը ուսուցիչ էլ չէ հասկանում, որով-
հետեւ չը նայելով որ մեր պատասխանը ուս-
սերէն լեզվով տպվեցաւ „ТѢЛ. ВѢСТН.“
լրագրում (№ 91) „Պովաս“ լրագիրը բոլոր-
ովին այլանդակ կերպով է մեկնում մեր
պատասխանի միտքը: Մենք մեր առաջնորդող
յօգովածի մէջ ասացինք՝ որ ուսու լրագիրներից
մի քանիսը չեն հետեւում ձիշդ մեթոդին, չեն
հաւաքում ձիշդ տեղեկութիւններ,—իսկ „Պով-
կասը“ հաւատացնում է, որ մենք գանդատում
ենք՝ թէ ուսու պրէսսան մեզ ձնշում է
առհասարակ և „KABKAT“ լրագիրը
մասնաւորապէս:

Բայց ուրիշ կողմից մենք համոզվեցանք,
որ „KABKAT“ լրագիրը շատ հմուտ է լատի-

Lebeau) հայագետ Ս. Մարթինի ծանօթութիւն-
ներով հանդերձ մինչ ցարդ առաջնորդ կարող է
համարուել գիտութեան այդ ճիւղի մէջ: Անգղիացի
ժիլլոնը ևս մշակում էր այդ պատմութիւնը և չէր
թաղցնում իւր զղուանքը դէպք նորա մէջ տիրող
բունակալութիւնը, անաղին քաղաքագիտութիւնը
և օտարկութեան հերոսութիւնը, բայց նա չէր
բացատրել թէ ինչպէս կարողացաւ կազմուել և
երկար դիմանալ այդպիսի մի տէրութիւն:

Այդ աշխատանքը իւր վրա յանձն առաւ դադ-
ղիացի թիւերի պատմաբանը. նա իւր վերոյիշեալ
գրութեան մէջ փորձ է փորձում զննել այն տար-
րերը, որոնցից կազմուեցան Բիւզանդիայի քա-
ղաքական կենսքի յատկութիւնները, այդ բիւզան-
դիզմ առած բանը նա ցոյց է տալիս իբրեւ խառ-
նուրդ Հին աշխարհի մէջ ներգործող ուժերի, իբրեւ
հետեանք նորա մէջ կատարուած անցքերի:
Մենք միայն չունենք այստեղ ցոյց տալ թէ ինչպէս
և ինչ փաստերով գիտնական պատմագիրը ցոյց է
տալիս և հաստատում է իւր երկնագրութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Tableau de l'Empire romain. 1 v.
—Trois ministres des fils de Théodose. 1 v.
—Saint Jean Chrysostome et l'impératrice Eu-
dodoxie tr. par M. Amédée Thierry.—L'Empire grec
au dixième siècle par Alfred Rambaud.

Յունաց կայսրութեան պատմութիւնը միշտ ար-
համարուած է եղել գիտնականների կողմից. հա-
մարեան թէ մինչ ցարդ այդ պատմութիւնը անմշակ
է մնում, թէ և յունաց տէրութեան մատուցած
ծառայութիւնը կամ թէ զուր գործունեութեան
արդասիրը շատ նշանաւոր են մարդկութեան պատ-
մութեան մէջ, Գա չէր որ բաժանեց յետաճգն
սահմանափակեց գերմանացիների, արաբների և
թաթարների արշաւանքը. մինչև Մահմետը (632)
Պոլսի անմնասն թէրութեան մայրաքաղաք էր,

մինչև մենք Կարթագոն դա քաղաքականութեան կե-
դրուն էր. մինչև եկեղեցիների բաժանուիլը (1057)
դա քիչ էր մնում լուրձ էր Հռոմից նորա նա-
խապատուութիւնը. մինչև վենետիկացիների արշա-
ւանքը նա էր աշխարհի յոնեարանը, նորա մէջ էր
ծաղկում գիտութիւնը, արուեստը, արհեստները,
նաւագնացութիւնը, նա լուսաւորեց և քաղաքա-
կրթեց Սլաւացոց, ազգերը. Բուսաց տէրութիւնը
նորա ամենամեծ բայց ոչ մէկ հատիկ զործն է:
Գորա յուսահատ մարտաման չնորհիւ ճաճիկների
դէմ լինաստանը, Հունգարիան և Աւստրիան կա-
րողացան պատրաստուել կրօնքի և քաղաքակա-
նութեան պաշտպան հանդիսանալու: Եթէ իրա-
ւամբ ընդհանուր պատմութեան համար այդպիսի
մեծ նշանակութիւն ունի Յունաց կայսրութեան
պատմութիւնը, ապա ուրեմն որքան մեծ է նորա
նշանակութիւնը մեր աղջկային պատմութեան հա-
մար. երբոր Հայաստանի մեծագոյն մասը երկար
տարիներ յունաց կայսրների աղբեղութեան կամ
իշխանութեան ներքոյ էր, երբոր մեր ընտիր մար-

ապացուցանելով Ա. Պոլսի ժողովները կարող էին
քննել և իւրեանց վաւերացումները տալ,
որինակի համար, Ա. անի, Ա. անի, Պոլսացի
մէջ պատահած մի անցքին Պոլսը ձգւում է
տարիններով, դատարաններ և դատարանի
կողմից բացվում են անընդհատ գործընթացներ
ներ, մինչև, որպէս յաճախ պատահում է,
դատարանների անձամբ ստիպում են Ա. Պո-
լսի դիմել և ամիսներով իւրեանց վիճմունք-
ների վճիռն սպասել:

Մի այդպիսի վարչութեան ձեւը, ոչ միայն
քաղաքակրթութեամբ պետութիւններում անկա-
րելի է գտնանել, այլ և վայրենի ազգերի մէջ
անգամ նորա օրինակը հազուադէպ է: Որով-
հետև Ա. Պոլսի ֆարաքական ժողովը երբեք
չէ կարող և անկարելի է որ կարողանայ Տա-
կաստանի աւելի քան երեք միլիոն հայ ժողո-
վրդի պէտքերը հոգալ և նոցա պահանջները
լրացուցիլ բաւականութեամբ տալ, երբոր նա,
նոյն իսկ Ա. Պոլսի մէջ պատահած գործերը
քննելու և վճիռելու անձեռնհաս է:

Յիշիալ հանգամանքները աչքի առջև ու-
նենալով Սր. Պատրիարքը առաջարկում է
Քաղաքական ժողովին կազմել երկու մաս-
նա ժողովներ, մինը՝ տեղական գործոց
համար, միւսը՝ գաւառական գործոց հա-
մար, որպէս զի նոքա թիւիւններն տարիններով
վեր թափուած գործերը:

Եւթ պատճառաւ Սր. Պատրիարքը ներ-
կայանում է մի ծրագրի քաղաքական ժողո-
վի քննութեանը, որոյ մէջ բացատրում է
նա, թէ սահմանադրութեան արդի օրէնքները
և նոցա գործադրութեան ձեւերը անհամա-
պատասխան են հայ հասարակութեան ներկայ
պիտոյքներին, և խնդրում է նորից վերաքննել
սահմանադրութիւնը, լրացնել նորա թիւրու-
թիւնը, և ընդհանուր թուրքական հայերի
պահանջները յարմարաւոր կացուցանել:

Քաղաքական ժողովը, ոչ միայն ուղարկու-
թիւն չէ դարձնում Սր. Պատրիարքի մի այդ-
պիսի առաջարկութեան վերայ, այլ արժան էլ
չէ անտուգ ընդհանուր ժողովին ներկայա-
նել: Եւթանից ծաղուծելն երկպառակութեան
պատճառները Սր. Պատրիարքի և Քաղաքա-
կան ժողովի մէջ, որ հետզհետեւ աւելի ծանր
հետևանքներին հասնելով, խորմեանք ստի-
պուած է լինում թողուլ պատրիարքական
աթոռը և իւր հրաժարականը տալ:

«Մասին» 1419 համարում կարգաւոր-
այդ հրաժարականի գրաւոր պատճէնը, որ
մատուցել է խորմեանք երեսփոխանական ժո-
ղովին, — մի ցաւալի տպագրութիւն է թոյ-
նում ընթերցողի վերայ, թէ ինչ անպիտան
վիճակի մէջ է սահմանադրութիւնը Ա. Պո-
լսում, և որպիսի անգործացած և չարանա-
խանձ անձինքներից բաղկանում է նորա
վարչութիւնը: Օրինակի համար, Քաղաքա-
կան ժողովի անդամները յայտնում են,
թէ սահմանադրութիւնը ամենեւին վերաքն-
նութեան կամ փոփոխութեան կարգաւորութիւն
չունի, և համարում են խորմեանքին հակա-
սահմանադրական, որ պահանջելով գործա-
մեղանքում էր սահմանադրութեան սրբազնու-
թեանը զէմ... Օտարմանայի յետադէմ միտք,
որ մեր գարում բոլորովին հիւսնադատ ուղղ-
ների ցնորք համարելու է: Մի ժողովուրդ, որ
կառավարվում է անփութի օրէնքներով, նա կը
մնայ անփութ անդարձութեան մէջ:

Եւթ վէճերը քննելու համար կազմուած
երեսփոխանական ժողովը բոլորովին իրաւացի է
համարում խորմեանքի հրաժարմանը առիթ
կորդ պատճառները, և նորա բացատրու-
թիւնը յարգելով, նորից հրաւիրում է պա-
րիարքական աթոռը ընդունելու: Սրբազան
հայրիկը ընդունում է այդ առաջարկութիւնը:
Վերջացում են մեր խօսքը նորանով, որ
Ա. Պոլսի սահմանադրութիւնը երբեք հասնել
չէ կարող իւր նպատակին, քանի որ նա Ա.
Պոլսի մէջ է միայն կենդանանում քանի որ

չեն աշխատելու նորան հանրային գրու-
թեան վերածել և բոլոր տաճարների հա-
յերի համար նրա գործադրութիւնը կարեւոր
կացուցանել:

Մէլքեդէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լրագիրները հաղորդում են սրտերեւում լոյս
է տեսել իտալական զենեքաւոր Լամարմորա զորքը՝
Un po più die luce sulle venti politici e militari
dell' anno 1866 (Մի փոքր աւել լոյս 1866 թ-ի
քաղաքական և զինուորական անցքերի վերա-
բերութեամբ): Այս զրկածը երևան է հանում
զանազան իրողութիւններ, որոնք անկասկած չառ
լոյս պէտք է ձգեն իշխան Բիսմարկի քաղաքա-
կանութեան վերա Աւստրիայի վերաբերութեամբ,
Լամարմորա հաստատում է, որ Պրուսիան ամենայն
միջոց է գործ դրել, որ Աւստրիային յաղթի և
խօստանում էր իտալիային ոչ միայն վենեցիան
և Տրիեստը այլ և ուրիշ գերմանական դա-
ւառներ Աւստրիայի: Նմանապէս տեղեկանում ենք
որ Պրուսիան ծածուկ յարաբերութիւններ էր
պահպանում Ռուսիայի ապստամբական կու-
սակցութեան հետ, զորքով դորան գործել Աւս-
տրիայի դէմ:

— Մադրիդի հեռագիրը հաղորդում է, որ պ.
Սալմերոն ընտրվել է կորտէսի նախագահ: Մադ-
րիդ քաղաքում կալանաւորներն տեղութեան հրա-
մանով շատ անձինք, որոնք ծածուկ դաւադրու-
թիւն կազմեցին Նաբլիսանների խումբ կազմա-
րելու նպատակով մարաքաղաքը չբնակալուած:

— Միջադպրոյն Վիկտորիան մէջ ինչպէս յայտ-
նի է արդէն անցել տարի Հաագ քաղաքում
եղած ժողովից յետոյ տարաձայնութիւն պատա-
հեց: Մի մասը կենտրոնականներն են և կարլ
Մարիսի առաջնորդութեամբ իրանց ընկերու-
թեան կառավարութիւնը զետեղեցրին Նիւ-Իորկ
քաղաքում, իսկ միւս կուսակցութիւնը, որի գե-
ղական է Բակունինը իրանց ֆիդելիտականներն
են կանչում: Հետաքրքիրը այն է, որ երկու կուսակ-
ցութիւններն էլ իրանց տարեկան ժողովը պէտք է
այս տարի ունենան նոյն քաղաքում — ժնեւը և
նոյն ժամանակ — սեպտեմբերի սկզբին:

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հեռագիրը հաղորդում է որ իտալիայի թագա-
ւորը ցանկութիւն է յայտնել սեպտեմբեր ամսին
այցելութիւն անել գերմանական Վայմար որ այս
մասին տեղեկանալով ինչն էլ հրաւէր է ուղար-
կել Վիտտորիո Էմանուէլէ թագաւորին:

Մեզ գրում են երևանից՝ Մամուլի տակ մտաւ
«Ստորագրութիւն Արիւմանաց Սերոյն Գեղար-
դայ, հանդերձ հետաքրքրական պատմական ծա-
նոթութեամբ» աշխատասիրութիւն պ. Արզար
Գուլամիրեանից: Տպագրութիւնը կատարվում է
Էջմիածնայ տպարանի մէջ ազնիւ թղթի վերա:

Վաղիկավկասից հաղորդում են մեզ՝ ներկայ
օգոստոսի 17-ին Պատրիարքարկի մէջ երկարատե
հիւանդութեանից յետոյ կիւրեց իր ժամանակաւոր
կեանքը Թիֆլիզ քաղաքացի Սիբիրցով Սոգոմո-
նեան Ղորղանեանց: Հանգուցեալը թաղվեցաւ
Վաղիկավկասի հայոց եկեղեցում, որի ծխական
ուսումնարանը, որպէս լրում ենք, հանդուցեալի
կիւր և եղբայրը մտադիր են մի նշանաւոր գու-
մարով ապահովել:

Հեռագիրը հաղորդում է որ Պարսից Դաշը իր
երկրը վերադառնալուց յետոյ, իսկոյն կալանա-
ւորել է տուել իր առաջին մինիստր Սադրա-
ղամին և ուղարկել է տուել նրան աքսորանք: —
Լաւ հետանք է Եւրոպայի ճանապարհորդութեան:

«Биржа» լրագիրը հաղորդում է որ երբ խեղովը
և Սերբիայի և Վոյտեկեցիայի իշխանները վիեն-
նայից հրաւէր ստացան աշխարհահանդիսին այցե-
լութիւն դալու, Սալթանը նոցա իրաւունք չը
տուէր այս հրաւէրին հետեւելու, տեսնելով այս
ճանապարհորդութեան մէջ ճանկատարելի վնա-
սակար նպատակներ: Խեղովը ճշմարիտ որ վի-
րադարձաւ Եգիպտոս, նախ քան զուրա դար Տա-
կաստանի սահմանից, իսկ իշխանները հասնելով
Վիեննա չարիքաւոր չեղ ընդունելութիւն վայե-
րեցին: Տաճկաստանի կառավարութիւնը տեսնելով
այս վարմունքը մէջ մի յայտնութիւն Աւստրիայի

կողմից իր դէմ, յետ կանչեց վիեննայից իր դե-
պանին, որով և Աւստրիայի կառավարութիւնը
նոյնը անել ստիպեցաւ:

Եւսիս 1-ին Ա. Պատրիարքը կատար-
վել է հինգ տոկոսաբեր երկրորդ ներքին փո-
խառութեան տոմսերի վերականգնող և
հետեւալ տոմսերին են ընկել զրեւուր
տանիկ զուամարները:

Սերի № №	Տոմս. № №	Տարած Գումարը.
07,936	11	200,000 . . .
14,317	14	75,000 . . .
11,875	34	40,000 . . .
10,450	44	25,000 . . .
00,755	25	
19,368	12	10,000 . . .
07,613	21	
15,415	44	
16,773	19	
00,512	40	8,000 . . .
04,627	25	
03,454	19	

5000 . . .

11,541	17	01,550	20
00,919	30	01,653	31
15,371	33	16,928	45
06,119	4	18,863	22

1000 . . .

01,182	11	18,016	29
05,551	48	06,242	46
13,219	13	13,261	11
06,510	18	18,159	10
16,261	37	06,282	31
19,753	15	01,781	21
17,913	6	14,208	2
03,239	8	06,381	2
09,122	31	07,617	30
16,287	31	00,693	7

Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն

ԹԻՖԼԻՉԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Սեպտեմբերի 12-ին):

ՈՍԿԻՆ, (պոլիմեթրալ)	6	10	4
ԲԱՄԲԱԿԸ Երևանու, երկ. տես.			
» (հին սերմ),	4	20	»
» Ամերիկայի սերմից	6	»	»
ԲՈՒՐԴԸ Թուշի	6	20	»
» Թարեքեմի	4	50	»
ՇԱՔԱՐԸ Ռսի (Բրոցկու)	8	»	»
» , միւս տեսակը	7	90	»
» զաղարանից տարանցիկ	5	50	»
մաքը վճարած	8	60	»
ՇԱՔԱՐԱԽԱՐԸ Ռսի	6	30	»
ՂԱՉՎԱ Լիվանի լաւ	15	50	»
» Մօկո, շատ լաւ	17	»	»
» Մարաշիլի, ցածր	13	50	»

ԱԼԻՐԸ Երևանի առաջին տե- սակը	1	»	»
» , երկրորդ տե- սակը	»	90	»
ԱԼԻՐԸ Գեանջու հասարակ	1	»	»
» Զորագեալու	1	»	»
ԳԱՐԻՆ Երևանի	»	50	»
ՊՂՊԵՂԸ	11	»	»
ՇԻՐԱՄԻՏԻ ձէթ	7	»	»
ՄՈՍ	11	50	»

ԱՐՏԱՔԱՆՄԱՆՆԵԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ

ՓՈՒՆԱԿ. բարաթ պոլս	6—82
» , Թաւրիզում վճա	4—85
ՄԱՐՍԵԼ և Փարիզ 100 րուբլին ածէ	348½ ֆր.
ԼՕՆԴՈՆԻ վերա, (Օղէսայի կուրսը)	
7 րուբլի 33 կոպէկը ածէ	1 լիրա
ՄԱՐՍԵԼԻՆԻ Բարաթի 50 քլիւ	
(3 փուլ 2 գրվ.) Երևանու Ամ- բիկ. սերմի բարաթակը	
ձախվում է	85 ֆր.
» առաջին տեսակ (հին սերմ)	57 ֆր.
ՄԱՐՍԵԼԻՆԻ Թուշի տղիտակ բուրդը	
ձախվում է	95 ֆր.
» սեր և միջնորդ	75 ֆր.

» զառան բուրդը ածէ	105 ֆր.
» Թարաք. բուրդը ածէ	70 ֆր.
» Ղարաք. բուրդը ածէ	55 ֆր.

ԿՕՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ խաղ Նուխայ թիւն
(մատաքը) շատ ընտիրը 150—160 րուբլի. Թոյլ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս եկաւ Պ. Ն. Տէր
Ղաւնեանի «Այբլենի լեզու» առաջին տա-
րուայ երկրորդ տպագրութիւնը այլ և այլ
փոփոխութիւններով: Նախ գրքի սկզբում զե-
տեղած է սկզբնական նկարչութեան օրինակներ,
երկրորդ, նորա պրքեանական մասին բոլորովին
նոր և զիւրին ձեւ է տուած և երրորդ, գրքի
այլ և այլ երեսներում ընթերցանութեան նոր
յօդուածներ են աւելացրած: Պիւն է 40 կ,
ձախվում է Թիֆլիսում պ. Վարդանանցի
և ընկ. գրատանը: Մայրենի լեզուի երկրորդ
տարին տպվել է:

Докторъ Медицины, И. Каспарьянъ,
квартировавший на Вельяминовской улицѣ въ
домѣ Саатсазова, живетъ въ настоящее
время въ Соломахаѣ, на Ртищевской у-
лицѣ, въ верхнемъ этажѣ дома, бывшаго
Араба—Оглы. Приемъ больныхъ, по вну-
треннимъ и венерическимъ или сифилити-
ческимъ болѣзнямъ, отъ 10—12 часовъ
утра ежедневно. —

Հանկարգողներ ծառաներին, աղախներին և
ղայախներին վարձել, նոյնպէս և բնակարաններ
վարձել — կարող են գիմել տեղեկացոյց դրա-
սենակ, (справочная контора) որ գտնվում է
Պօլցովի փողոցի վրա, գեներալ Արմաւու
բարձրատարայում:

Թիֆլիսի քաղաքացի Խաչակ Մարտիրոս
Միլիթարով և ընկ:

Սիմոնովիչի երկուսն աւարական ու-
սումնարանը և երկուսն իր պարտեզը
պատրաստում է երկխաներին արքունական ու-
սումնարաններ մտնելու համար:

Ընդունում է սեպտեմբերի 1-ից. Գաւառ վոյե-
թիւնը կ'սկսվի սեպտեմբերի 10.

Գինն է տարեկան 60 ր. կէս տարեկան պէտք է
առաջուց վճարած:

Սաւաճարանը գտնվում է Սօլուլուի Ս ա-
րօնի ստիւանոսի քուչում. Ս վէճի և
կեանքի տանը:

ԱՂՎՈՒՍ

Վաղիմիր Վաղիսլաւի Մարցին կ'է վիչ տե-
ղափոխեցաւ Արմենապոլիս փողոց Նաղարովի
տանը, կառավարական Գիմնազիայից ոչ հեռու, և
ընդունում է կիւնստներին առաւօտները 8-ից
մինչև 10 ժամ, իսկ երեկոները ամեն ժամանակ
սկսած հինգ ժամից:

5 (10)

ДЕПО ЖАНТЪ
ФОРМА ПАТУРОВА

Իմ մշտական գեղեցիկ (մուշտարի) համար
յարմար համարելով՝ ես բաց արի առանձին
խանութ լամպեղներ, Միկայիլովի կամուրջի
ծայրում, իշխան Վ. Գորնցովի արձանի հանդէպ
պ. Միկայիլովի տներում, — որտեղ գտնվում
են մեծ քանակութեամբ լամպաներ, ինչպէս
խմայժեան վաճառատնում (բէյթ) և ծախ-
վում են նոյն իսկ վաճառատնի արժան գնով,
Խանութ պատասխանատու է լինում նոյնպէս
և լամպաների ամրութեան և մաքրութեան
համար:

Եւթ օրերում ստանալով մեծ քանակու-
թեամբ լամպաներ, Եւթօպայի առաջին գոր-
ծարանից և վերջին տեսակների ամենամաքու-
ր և նոր շէնքով ամենաբարձր ջոխուածը, ես
ընտրեցի մեծ քանակութեամբ նոր բացած խա-
նութի համար, լամպաներս դերազանցվում
իւրեանց յարմարութիւնով և անվանալ լինե-
լով Տրիւնցի, որոնք ունեն մինչև այժմուայ
վաճառուող լամպաները, իսկ այժմ ստանալով
առաջիններից կարող ենք պատասխանատու լի-
նել նոցա ամեն մի անվայելութեան:

Լամպավաճառ. Ե. Մատուրեանց: